
«ՀԱՄԼԵՏԻ» QUARTO 2 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԱՏ ԹՈՓՉՅԱՆ

Մեզ են հասել «Համլետի»՝ սկզբնագրային արժեք ունեցող երեք տպագիր տարբերակ (Շեքսպիրի երկերի ձեռագրերը չեն պահպանվել): Առաջինը «քառածալ»¹ (quarto, մոտ 14 x 20 սմ կամ դրանից փոքր-ինչ ավելի/պակաս՝ կախված թղթի նախնական չափից) հրատարակություն է (1603): Այն բնորոշված է իբրև «վատ» (bad), համարվում է մի դերասանի հիշողությամբ վերականգնված գրահենական հրատարակություն և գրականության մեջ հայտնի է որպես Quarto 1 (Q1): Երկրորդը՝ դարձյալ քառածալ (1604/5), ինչպես ենթադրվում է, հիմքում ունեցել է Շեքսպիրի ձեռագիրը: Սա համարվում է «լավ» (good) և հղվում իբրև Quarto 2 (Q2): Իսկ երրորդը՝ ընդգրկված Շեքսպիրի դրամատիկական երկերի՝ հետմահու լույս տեսած մեծադիր «երկծալ» (folio) ժողովածուում (1623), նույնպես «լավ» բնագիր է: Այն (ինչպես և ողջ ժողովածուում) հայտնի է իբրև Folio 1 (F1) կամ պարզապես՝ Folio (F): Q1-ը ծավալով գրեթե երկու անգամ փոքր է Q2-ից և դրանից քիչ ավելի պակաս՝ F-ից: «Համլետի» նոր ու նորագույն հրատարակություններն առավելապես հիմնված են Q2-ի և F-ի վրա: Սովորաբար երկուսի միաձուլմամբ պատրաստվել է համահավաք բնագիր: The Arden Shakespeare երրորդ շարքի երկհատորյակում երեք տարբերակները՝ Q1, Q2 և F, հրատարակված են առանձին²: Q1-ն առհասարակ մասնագետների կողմից քիչ ուշադրության է արժանանում՝ մեծ մասամբ օգտագործվելով միայն որոշ տարընթերցումների միջև ընտրություն կատարելու, Շեքսպիրի օրոք «Համլետի» կրճատ, բեմադրված տարբերակի մասին պատկերացում կազմելու ու մի քանի բացառիկ բեմական ցուցումների համար: Իսկ այն հարցին, թե ինչ կերպարանք է ունեցել Շեքսպիրի գրած «Համլետը», բանասերները փորձում են պատասխանել ոչ թե Q1-ի, այլ Q2-ի ու F-ի ուսումնասիրությամբ: Դրանցից առաջինին՝ Q2-ին է նվիրված սույն հոդվածը:

Թատերախմբերն աշխատում էին հեղինակային իրավունքով իրենց պատկանող գործերը միանգամից չտպագրել, որպեսզի ժողովուրդն այդ պիեսները ոչ թե կարդա, այլ դիտի իրենց թատրոնում, և որևէ մրցակից չկարողանա դրանք բեմադրել: Իր հերթական դրամատիկական երկն ավարտելով՝ Շեքսպիրն այն հանձնում էր թատերախմբի ավանդապահին (book-keeper, ոչ այսօրվա «հաշվապահ» նշանակությամբ, կամ book-holder), որը կոչվում էր նաև «հուշարար» (prompter), թեև հուշարարություն բառիս բուն իմաստով (երբ մեկը դերասանին հուշում է նրա ասելիքը)

¹ Մեկ մեծ թերթը ծավալում էր երկու անգամ, և ստացվում էր 4 թերթ (8 էջ):

² Տե՛ս *Hamlet*, ed. Ann Thompson and Neil Taylor, The Arden Shakespeare (Third Series), 2006 և *Hamlet: the Texts of 1603 and 1623*, ed. Ann Thompson and Neil Taylor, The Arden Shakespeare (Third Series), 2006:

շեքսպիրյան թատրոնում չէր կիրառվում: Այնուհետև, ինչպես ենթադրվում է, նախ թատերախմբի գրիչը (scribe)³ Շեքսպիրի «սևագիր թղթերից» (foul papers) մաքրագիր ընդօրինակություն էր անում, որը պիտի դառնար բեմադրության համար պիեսի պաշտոնական օրինակը՝ «գիրքը», «բեմական գիրքը» կամ «հուշարարի գիրքը» (book, playbook, playscript, promptbook): Ավանդապահի/հուշարարի առաջին խնդիրն էր՝ ներկայացման համար ստանալ «միջոցառումների տեսուչի» (Master of the Revels) թույլտվությունը: Եթե տեսուչն արտոնում էր պիեսի բեմադրությունը, մաքրագիր պաշտոնական օրինակի վրա նշվում էր՝ «թույլատրված գիրք» (allowed book): Ապա, ըստ երևույթին, բնագիրը, եթե այն շատ ծավալուն էր, բեմի համար կրճատվում էր, և առանձին փաթույթների վրա արտագրվում էր յուրաքանչյուր գործող անձի հատվածը: Ավանդապահի/հուշարարի պարտականությունն էր՝ ընտրել դերակատարներին (իհարկե, թատերախմբի բաժնետերերի համաձայնությամբ) ու «գրքի» վրա զանազան լրացուցիչ նշումներ անել՝ բեմադրության ընթացքը հնարավորինս հստակեցնելու համար: Ներկայացման ժամանակ նա գտնվում էր հետնաբեմում կամ հանդերձարանում և հսկում, որ բոլոր դերասանները բեմ դուրս գան ժամանակին ու ճիշտ հանդերձանքով և առհասարակ ամեն բան արվի հավուր պատշաճի⁴ (այստեղից էլ՝ նրա «հուշարար» անունը): Դեղինակի «սևագիր թղթերը» չարունակում էին մնալ թատերախմբի սեփականությունը և հետագայում օգտագործվում էին հրատարակության համար: Քանի որ շուտափույթ տպագրություն ցանկալի չէր, դրանք կարող էին պահվել այնքան ժամանակ, մինչև շրջանառության մեջ հայտնվի որևէ «վատ», չարտոնված հրատարակություն: Դրանից հետո թատերախումբը շտապում էր ձեռագիրը վաճառել որևէ հրատարակչի ու գլուխ բերել մի «լավ» տպագրություն, որպեսզի նախորդ «վատը» դուրս գա շրջանառությունից: Դրանց այսպես է, հավանաբար, եղել «Համլետի» դեպքում, և նշված տեղեկությունները մեզ հարկավոր էին՝ պատկերացնելու համար Շեքսպիրի օրոք այս երկի բեմադրության ու հրատարակության պարագաները:

Q1-ի լույսընծայումից մոտ մեկ տարի անց տպագրիչ Ջեյմս Ռոբերտսը⁵ նույն հրատարակչի՝ Նիքոլաս Լինգոի համար տպագրել է Q2-ը (Q1-ի տիտղոսաթերթին տպված մյուս անունը՝ Ջոն Թրանդլ, հիշատակված չէ): Թե ինչպես է նույն Լինգոը հրատարակել և՛ չարտոնված, գրահեռական Q1-ը, և՛ հեղինակային Q2-ը, անհասկանալի է մնում:

³ Դայտնի են Շեքսպիրի մահից հետո նրա թատերախմբի երկու ավանդապահների անունները՝ Էդուարդ Նայթ և Թոմաս Վինսենթ. երկուսն էլ սկսել են «Թագավորի մարդկանց» համար աշխատել մոտ 1624 թ.: Գիտենք նաև մի գրիչի անուն. Ռալֆ Քրեյն, որը թատերախմբում է եղել 1618-1624 թթ.: Նրա ընդօրինակություններն օգտագործվել են շեքսպիրյան F-ում առաջին հինգ գործի տպագրության համար (տես **Andrew Gurr**, *The Shakespeare Company, 1594-1642*, Cambridge, 2011 [first published 2004], էջ 121, 225–226, 232, 245):

⁴ Դմնտ.՝ *The Oxford Companion to Shakespeare*, ed. Michael Dobson & Stanley Wells, reprinted with corrections, Oxford, 2008 (first published 2001), էջ 51, 151, 347 և **Andrew Gurr**, *The Shakespearean Stage, 1574-1642*, fourth edition, Cambridge, 2009 (first edition 1970), էջ 254–255:

⁵ 1602 թ. Ռոբերտսը, «Համլետի» տպագրության իր իրավունքն ապահովելու համար, այն գրանցել էր «Հրատարակչական մատյանում» (Stationers' Register)՝ «Գիրք, որ կոչվում է «Դանիայի արքայազն Համլետի վրեժը» վերնագրով:

Q1-ի վերնագիրը չի փոխվել (միայն ավելացված է ստորակետ ու վերջակետ)։ «Դանիայի արքայազն Յամլետի ողբերգական պատմությունը» (հին ուղղագրությամբ՝ *The Tragicall Historie of Hamlet, Prince of Denmarke.*), իսկ հեղինակի ազգանվան մեջ այս անգամ գծիկ չկա՝ *William Shakespeare*։ Ընթերցողի ուշադրությունն անհապաղ հրավիրվում է այն հանգամանքին, որ երկը «տպված է նորովի ու ընդարձակված ևս այնքան, որքան որ էր՝ ըստ ստույգ և լիակատար օրինակի» (*Newly imprinted and enlarged to almost as much againe as it was, according to the true and perfect Coppie*)։ Պարզ է՝ ակնարկվում է Q1-ն իբրև արդեն հնացած ու ոչ պիտանի, քանի որ կա այս նոր՝ իսկական բնագրի վրա հիմնված ու կրկնակի ծավալով հրատարակությունը։ Եվ իրոք, 3674 տողանոց Q2-ը համարյա երկու անգամ ընդարձակ է 2154 տողանոց Q1-ից։ Յատկանշական է, որ, ի տարբերություն Q1-ի, այս անգամ խոսք չկա բեմադրության մասին. ասել կուզի՝ Q2-ն առաջին հերթին «ընթերցանության տարբերակ» է⁶։ Տիտղոսաթերթի ստորին մասում գրված է, թե Լոնդոնում Նիքոլաս Լինգի համար Ջեյմս Ռոբերտսի տպած սույն գիրքը վաճառվելու է նրա (Լինգի)՝ Ֆլիքսթրիթում գտնվող Սուրբ Դանսթանի («Դանսթոնի») եկեղեցու տակի խանութում (*Printed by I. R. for N. L. and are to be sold at his shoppe vnder Saint Dunstons Church in Fleetstreet. 1605.*)։ XIX դարում այդ եկեղեցին փողոցի ընդլայնման նպատակով քանդվել է, սակայն հետո եկեղեցու գերեզմանոցի տեղում կառուցվել է նորը⁷։

Ողջ տպաքանակից պահպանվել է ընդամենը յոթ օրինակ, որոնցից մեկը (1605) գտնվում է լեհական Վրոցլավ քաղաքի համալսարանի, երեքը (1604)՝ Միացյալ Նահանգների և երեքը (1605)՝ Բրիտանիայի⁸ գրադարաններում։ Տպագրությունը, ինչպես տեսնում ենք նշված թվականներից, սկսվել է 1604-ին ու շարունակվել հաջորդ տարի։ Q1-ի պես, Q2-ում ևս շարվածքի սրբագրիչը (*press corrector*) ընթացքում ուղղումներ է արել (ոչ միշտ հաջող), բայց չուղղված թերթերը դեն չեն նետվել, և պահպանված օրինակների միջև կան բնագրային փոքր տարբերություններ⁹։

Մասնագետները համամիտ են, որ Q2-ը շարվել է ուղղակիորեն Շեքսպիրի ձեռքով գրված «սևագիր թղթերից», և դա հաստատելու համար բերվում են համոզիչ փաստարկներ։ Գրքում տարաբնույթ անճշտություններն ու բացահայտ սխալներն այնքան շատ են, որ դժվար է դրանց հետևում երևակայել Ռոբերտսի տպարան մտած մի մաքուր ու հստակ, պրոֆեսիոնալ գրիչի արտագրած բնագիր։ Ջոն Դովեր Ուիլսոնը, որ «Յամլետի» կորած հեղինակային ձեռագրի մասին 1934 թ. մի երկհատոր աշխատություն է հրատարակել, Q2-ը համարում է Շեքսպիրի օրոք լույս տեսած նրա բո-

⁶ Յմն.՝ **Giorgio Melchiori**, *Hamlet: the acting version and the wiser sort*, in *The Hamlet First Published (Q1, 1603): Origins, Form, Intertextualities*, ed. Thomas Clayton, Newark (Del.), 1992, էջ 200 և **Lukas Erne**, *Shakespeare as Literary Dramatist*, Cambridge, 2003, էջ 220։

⁷ Այս մասին տեղեկություններ կան եկեղեցու համացանցային կայքում. <http://www.stdunstaninthewest.org/homepage.htm>։

⁸ Դրանք գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում. Folger Library (Washington); Huntington Library (San Marino); Beinecke Library (Yale University, New Haven); British Library (London); Trinity College Library (Cambridge) և Bodleian Library (Oxford)։

⁹ 26 կետից բաղկացած դրանց աղյուսակը տես *Hamlet*, ed. Ann Thompson and Neil Taylor, էջ 524–525։

լոր երկերից ամենավատ տպագրվածներից մեկը: Մեղքի հիմնական բաժինը նա բարդում է տպարանի վրա՝ ենթադրելով, թե գրաշարը մի աշակերտ էր կամ պատանի վարձու արհեստավոր (a learner or a young journeyman), որն արագ աշխատելու համար դեռ բավարար չէր յուրացրել իր արհեստը: Մյուս կողմից, սակայն, բանասերը նկատում է, որ Q2-ում գարնանալիորեն քիչ կան գրաշարներին հատուկ մանր վրիպակներ, ինչպիսին է, ասենք, բառի ներսում տառերի տեղաշարժը: Ուրեմն, այնուամենայնիվ, Q2-ի գրաշարն այնքան էլ անփորձ չէր, և մնում է մտածել, թե նա բազմաթիվ սխալներ է թույլ տվել՝ ստիպված լինելով իր համար սովորականից կարճ ժամկետում շարել մի շատ բարդ ձեռագիր¹⁰:

Դովեր Ուիլսոնի տեսակետը մոտ երկու տասնամյակ անց վերանայել է Ջոն Ռասսել Բրաունը¹¹: Ուղղագրական առանձնահատկությունների հիման վրա նա ցույց է տվել, որ գիրքն իրականում շարել են երկու գրաշար՝ Ռոբերտսի նույն արհեստավորները, ովքեր տարիներ առաջ շարել էին Շեքսպիրի Q1 «Վենետիկի վաճառականը» և Q2 «Տիտուս Անդրոնիկոս»-ը (Q1-ից)՝ իրենց գործն անելով ընդհանուր առմամբ որակով: Ուստի նրանք, որ պայմանականորեն կոչվում են X ու Y (compositors X and Y)¹², սկսնակներ չէին: Քանի դեռ չի ապացուցվել, ասում է Բրաունը, «թե նրանք երկուսն էլ մեղավոր էին նման անհմտության համար կամ թե նրանց շտապեցնում էին Q2 «Համլետը» շարելիս, մենք պետք է ենթադրենք, որ երկուսն էլ տեղի են տվել իրենց ունեցած օրինակի ուրույն անընթեռնելիությանը»¹³: Իսկ դրան հավանաբար նպաստել է նաև ձեռագրի մաշվածությունը (ողբերգության գրությունից մինչև Q2-ի հրատարակությունը երևի ավելի քան երեք տարի էր անցել):

X-ը, երևում է, առավել աճապարանքով է աշխատել¹⁴: Նրա վրիպակներն ավելի շատ են, բայց էական սխալներ ու բացթողումներ կան երկուսի շարած էջերում էլ¹⁵: Y-ի վրիպակն է՝ thre, փոխանակ՝ there («այնտեղ»․ IV.3.34¹⁶), իսկ X-ը շարել է՝ rehome, փոխանակ՝ rheume («արտասուք»․ II.2.500), implorators, փոխանակ՝ implorators («խնդարկուներ»․ I.3.129), againgst, փոխանակ՝ against («դիմաց»․ V.2.149) և այլն: Ահա՛ օրինակներ նրա բաց թողած հատվածներից (դրանք դնում ենք ուղղանկյուն փակագծերի մեջ)․ I will leaue him [and sodainely contriue the

¹⁰ Տե՛ս **John Dover Wilson**, *The Manuscript of Shakespeare's Hamlet and the Problems of its Transmission: An Essay in Critical Bibliography*, 2 vols., Cambridge, 1934, էջ 88–100:

¹¹ Տե՛ս **John R. Brown**, *The Compositors of Hamlet Q2 and the Merchant of Venice*, *Studies in Bibliography* 7 (1955), էջ 17–40:

¹² Բրաունն իր հոդվածում կազմել է X-ի ու Y-ի շարած հատվածների ցանկ, որը տե՛ս նաև **Hamlet**, ed. Harold Jenkins, *The Arden Shakespeare (Second Series)*, 2001 (first published 1982), էջ 45, **Hamlet**, ed. George R. Hibbard, *The Oxford Shakespeare*, Oxford, 2008 (first published 1987), էջ 92 և **Hamlet**, ed. Ann Thompson and Neil Taylor, էջ 526: Ցանկը հիմնականում ճիշտ է, բայց հետագայում մասնակիորեն ուղղվել է՝ Q2-ում օգտագործված երկու տառատեսակների ուսումնասիրությամբ: Ապացուցված է, որ ամեն մի քառասուն թերթ լրիվ շարված է դրանցից մեկով․ **W. Craig Ferguson**, *Pica Roman Type in Elizabethan England*, Brookfield (Vt.), 1989, էջ 15:

¹³ **John R. Brown**, նշվ. աշխ., էջ 31:

¹⁴ Տե՛ս **Fredson Th. Bowers**, *On Editing Shakespeare*, Charlottesville, 1966, էջ 38–39:

¹⁵ Հմմտ.՝ **Hamlet**, ed. George R. Hibbard, էջ 92–93:

¹⁶ «Համլետ»-ի տողահամարներն ու հայերեն բոլոր հատվածներն ըստ պիեսի մեր ամբողջական թարգմանության են, որն այժմ տպագրության ընթացքում է:

means of meeting between him,] and my daughter («Գնամ և շուտ նրա ու աղջկա հանդիպման առիթ մոգոնեմ» [II.2.211–212], մինչդեռ բացթողման հետևանքով ստացվել է «Կթողնեմ/Կլքեմ նրան և իմ աղջկան», որ այդ համատեքստում անհմաստ է), Pastorall Comicall, Historicall Pastorall[, Tragicall Historicall, Tragicall Comicall Historicall Pastorall] («հովվերգակատակերգական, պատմահովվերգական[, ողբերգապատմական, ողբերգակատակերգապատմահովվերգական]». II.2.392–394), the humorous Man shall end his part in peace; [the Clowne shall make those laugh whose lungs are tickled a'th'sere,] and the Lady shall say her minde freely («Կրթոտ մարդը թող իր դերը խաղաղ ավարտի, [թող ծաղրածուն ծիծաղեցնի նրանց, ում թոքերի ձգանը թույլ է,] իսկ տիկինը թող ազատ իր մտքին ասի». II.2.320–323) և այլն: Y-ի բացթողումներից են. Ham. Ladie, shall I lye in your Lap? / Ophe. No my Lord. / [Ham. I meane, my head upon your Lap? / Ophe. I my Lord] («ՅԱՍԼԵՏ. Օրիորդ, պառկե՞մ ձեր գոգում: / ՕՖԵԼԻԱ. Ո՛չ, տեր իմ: / ՅԱՍԼԵՏ. Նկատի ունեմ՝ գլուխս ձեր գոգին դրած: / ՕՖԵԼԻԱ. Այո՛, տեր իմ»): III.2.109–112), his double vouchers, his recoueries[. Is this the fine of his fines, and the recouery of his recoueries], to haue his fine pate full of fine dirt? («երկու երաշխավորներով ու բռնագրաված գույքով[: Ա՞յս էր վկայականների վկայականն ու յուրացումների յուրացումը]. որ նրա պատվական գանգը պատվական հողով լցվի»): V.1.100–103) և այլն:

Այս կարգի սխալների մեծ մասը «նմանավերջության» (հունարեն՝ homoioteleuton) հետևանք է. երբ նույն բառով ավարտվող երկու հատվածներից մեկը վրիպում է ընդօրինակողի աչքից: Եթե սրանք գրաշարների շտապողականության ու անուշադրության արդյունք են և չեն ապացուցում Q2-ին հիմք ծառայած ձեռագրի դժվարընթեռնելիությունը, ապա շատ ուրիշները հենց դրա վկայություն են: Յտևյալ օրինակներում Շեքսպիրի գրածը սխալ է վերծանվել, և ստացվել է անհեթեթություն. friendly («բարեկամ»), փոխանակ՝ French («ֆրանսիացի». II.2.425), with ... the vumber («շագանակագույնով»), փոխանակ՝ with ... thumbe («բթով». III.2.347), breakes («ջարդում է»), փոխանակ՝ breathes («փչում է». III.2.378), pardons («ներում է»), փոխանակ՝ panders («կավատ է դառնում». III.4.89), the King («թագավորը»), փոխանակ՝ checking («չրջվելով». IV.7.63), trennowed (անհմաստ հնչյունախումբ), փոխանակ՝ winnowed («ներբաճաշակ» [«զտված»]. V.2.188) և այլն: Մասնագետների նշած բազմաթիվ ուրիշ օրինակներ այստեղ բերելու կարիք չկա: Q2-ում առկա սխալները հիմնականում ճշտվում են F-ի միջոցով:

«Արը Թոմաս Մորի գիրքը» ձեռագրի՝ Շեքսպիրին վերագրվող հատվածի¹⁷ ուղղագրական ու գրչական որոշ յուրահատկություններ նույնպես

¹⁷ Այդ անթվական ձեռագիրը՝ *The Booke of Sir Thomas Moore* վերնագրով, պահվում է Բրիտանական գրադարանում (BL, MS Harleian 7368): Booke տվյալ դեպքում նշանակում է՝ «բեմական օրինակ» (playscript, playbook), այսինքն՝ երկի բեմադրվելիք տարբերակը (տե՛ս վերը): Սակայն, ի սկզբանե արգելվելով գրաքննությանը, «Արը Թոմաս Մորի գիրքը» երբեք չի բեմադրվել: 1590-1595 թթ. այն գրել են երկու հեղինակ, իսկ տարիներ անց «բեմական օրինակի» վրա լրացումներ են արել ուրիշները: Այդ լրացումներից մեկը (Addition II.D)՝ 164 տող, դատելով հեղինակի լեզվանտածողության ու տառերի գրության հատկանիշներից, որոնք մասնագետները համեմատել են Շեքսպիրի

օգտագործվել են ի հաստատումն «սևագիր թղթերի» տեսության: Այդ ձեռագրում α -ն կարելի է շփոթել or -ի կամ u -ի հետ, և Q2-ում կան նման սխալներ. *sort*–*sate* [I.5.56], *quietas*–*quietus* [III.1.75], *raine*–*ruine* [III.3.22]: Էլիզաբեթյան ժամանակաշրջանում անգլերենի ուղղագրական կանոնները կարգավորված չէին, և նույն վերջավորությունը կարող էր գրվել, ասենք, իբրև *-nck* կամ *-nk*: Շեքսպիրը նախընտրել է առաջին տարբերակը, որովհետև հիշյալ ձեռագրում կարդում ենք *banck*, *thanck*, *thinck*, իսկ «Համլետ» Q2-ում՝ *bancke*, *ranck(e)*, *blanck(s)*, *sprinckle* և այլն: Արտասովոր, բայց Շեքսպիրին բնորոշ *sc*- գրությունը *s*-ի փոխարեն գտնում ենք ինչպես «Թոմաս Մոր»-ում (*scilens*), այնպես էլ «Համլետ» Q2-ում (*Sceneca*) և այլուր (ասենք՝ «Կորիոլան»-ում. *Scicinius*)¹⁸:

Այն, որ Q2-ը շարվել է ուղղակիորեն Շեքսպիրի «սևագիր թղթերից», երևում է նաև անկազմակերպ ու երբեմն անորոշ բեմական ցուցումներից և գործող անձանց անունների անմիօրինակությունից¹⁹: Դրանց հիման վրա կարելի է նաև որոշ պատկերացում կազմել Շեքսպիրին հատուկ աշխատառձի մասին: Enter old Polonius, with his man or two («Գալիս է ծեր Պոլոնիուսը՝ իր մեկ կամ երկու սպասավորի հետ») ասվում է II.1-ի սկզբում: Իրականում բեմ են ելնում միայն Պոլոնիուսն ու նրա ծառա Ռեյնալդոն: Կարծես «մեկ կամ երկու» գրելիս Շեքսպիրը դեռ չէր որոշել, թե քանի հոգի են հանդես գալու, և դա պարզվել է միայն ստեղծագործելու ընթացքում: Իսկ հետո նա այլևս չի անդրադարձել իր գրած բեմական ցուցումին: F-ում սա արդեն հստակեցված է. Enter Polonius, and Reynoldo («Գալիս են Պոլոնիուսն ու Ռեյնոլդոն»): Այդպիսին են նաև ուրիշ ցուցումներ: Թվում է՝ հեղինակը նախապես չի իմացել, թե ներկայացման համար քանի դերասան մատչելի կլինի, այդ պատճառով մոտավոր նշումներ է արել. Enter King, and two or three («Գալիս են Թագավորը և երկու կամ երեք հոգի». IV.3.1–2), Enter Rosencraus and all the rest («Գալիս են Ռոզենկրաուսն ու բոլոր մյուսները». IV.3.11.1), They enter («Նրանք գալիս են». IV.3.15.1) և այլն: Բացի այն բանից, որ պարզ չէ բեմ դուրս եկողների թիվը, նաև անհասկանալի է, օրինակ, «բոլոր մյուսները» Գիլդենշտեռնին ներառում են, թե՞ ոչ: Նա պետք է որ առժամանակ բեմից դուրս գտնվի՝ Համլետին հսկելու և հետո արքայի կարգադրությամբ ներս բերելու համար: F-ում այդ ցուցումներն արդեն կոնկրետացված են. նախ «Գալիս է Թագավորը», այնուհետև «Գալիս է Ռոզենկրանցը» և ապա «Գալիս են Համլետն ու Գիլդենշտեռնը»: Ընդսմին՝ համապատասխան հրահանգում (IV.3.15), ի տարբերություն Q2-ի, ավելացված է վերջինիս անունը. «Հե՛յ, Գիլդենշտեռն, բեր իշխանին»:

ստորագրությունների հետ, հավանաբար նա է իր ձեռքով արել (նրա ձեռագիրը հայտնի է որպես Hand D): Մի ավելի փոքր հատված՝ 21 տող (Addition III), նույնպես վերագրվում է նրան, բայց ընդօրինակված է անհայտ գրիչի ձեռքով (Hand C): Այս չափազանց ուշագրավ ձեռագրի մասին շատ է գրվել (տես, օրինակ՝ «*Shakespeare and Sir Thomas More: Essays on the Play and its Shakespearian Interest*», ed. Trevor Howard Howard-Hill, Cambridge, 2009 [first published 1989], իսկ ամփոփ տեղեկությունների համար՝ «*The Oxford Companion to Shakespeare*», էջ 433):

¹⁸ «Թոմաս Մոր»-ի ու «Համլետ» Q2-ի միջև կան նաև ուրիշ զուգահեռներ. հմմտ.՝ *Hamlet*, ed. Harold Jenkins, էջ 40–41:

¹⁹ Հմմտ.՝ *Hamlet*, ed. Harold Jenkins, էջ 37–38 և *Hamlet*, ed. George R. Hibbard, էջ 95–97:

Հատկանշական է որոշ գործող անձանց անհետևողական հորջորջումը Q2-ի տարբեր հատվածներում: Գերտրուդն, օրինակ, I.2-ի սկզբի բեմական ցուցման մեջ «Գերտրադ Թագուհին» է (Gertrad the Queene), Կլավդիուսի խոսքում՝ միշտ Գերտրարդ (Gertrard), իր առաջին խոսքի գլխագրում (I.2.68)՝ «Թագուհի» (Queene), այնուհետև՝ Quee. մինչև III.4: Այնտեղ նախ «Գալիս են Գերտրարդն ու Պոլոնիուսը», և ողջ տեսարանում, այլև IV.1-ում, նա հանդես է գալիս որպես Ger. (Quee. կարդում ենք միայն մեկ անգամ. III.4.51): IV.5-ում նա բեմ է գալիս իբրև Գերտրարդ և ապա մնում Quee. մինչև պիեսի ավարտը: Ստեղծվում է այն տպավորությունը, թե անձնական բնույթ ունեցող տեսարաններում, որտեղ թագուհին առաջին հերթին մայր ու կին է, Շեքսպիրը կամա թե ակամա շեշտել է նրա կերպարի ոչ պաշտոնական կողմը՝ Quee.-ի փոխարեն գրելով Ger.: Վերջին տեսարանում հանդես եկող Օգրիկը նախ «մի Պալատական» (a Courtier) է և իր դերը կատարում է որպես Cour., այնուհետև, երբ մեկը պետք է նրա անունը տա (V.2.192), դառնում է «պատանի Օսթրիք» (young Ostricke) ու Ostr., իսկ ավարտին՝ Osrick ու Osr., որպեսզի F-ում ի վերջո ձեռք բերի մեկ անփոփոխ անուն՝ Osricke: Այսինքն՝ որևէ պերսոնաժ կերտելիս Շեքսպիրը կարող էր հոգ չտանել նրան նախապես անուն տալու մասին, մինչև որ զգար դրա անհրաժեշտությունը: Ապա, նրա անունը մոտավորապես որոշելուց հետո, կարող էր ընթացքում այն հղկել ու վերջնական տեսքի բերել: Եվ սա մեզ պարզ է դառնում շնորհիվ այն բանի, որ Q2-ն արտացոլում է «Համլետի» «սևագիր թղթերը»:

Ուշադրություն է հրավիրվել, սակայն, մի հետաքրքիր հանգամանքի վրա: F-ի մասին իր մեծագրության մեջ Վալտեր Գրեգը նշում է, թե Q2 «Համլետի» առնվազն առաջին տեսարանը շարվել է Q1-ի մի «ուղղված» (corrected, երևի նկատի ունի՝ գրիչով վրան ուղղումներ արված) օրինակից²⁰: Q2-ի առաջին 13 տողն զգալիորեն տարբեր է Q1-ի համապատասխան շատ ավելի կարճ հատվածից, ասում է Գրեգը, բայց Հորացիոյի ու Մարցելլուսի մուտքից հետո երկու բնագրերը խիստ նման են դառնում, և ի հայտ են գալիս նաև տպագրական զուգահեռներ: Թե՛ Q1-ում և թե՛ Q2-ում գործող անձանց անունները նախ տողերի սկզբում են, սակայն հանկարծ Q2-ի գրաշարը, I.1.33 տողում Հորացիոյի խոսքից սկսած (Hora. Tush, tush, twill not appeare), որոշում է դրանք շարել խորքից: Ինչո՞ւ: Որովհետև այդպես է Q1-ում (1.21)՝ սկսած համապատասխան Hor. Tut, t'will not appeare տողից: Բացի այդ, գրաշարը երկու անգամ նախադասությունն ավարտում է վերջակետի փոխարեն ստորակետով (You come most carefully vpon your houre, [6] և And Leedgemen to the Dane, [16])՝ հետևելով Q1-ին (You come most carefully vpon your watch, [2] և And leegemen to the Dane, [6]): Բայց Q1-ում, ինչպես նկատում է Գրեգը, երկրորդ դեպքում ստորակետն արդարացված է, քանզի հաջորդ տողում Մարցելլուսի խոսքը շարունակվում է (And leegemen to the Dane, / O farewell honest souldier [6–7]): Այս դիտողություններն ուշագրավ են ու ճշմարտանման, սակայն պետք է հաշվի առնել, որ Q2-ի առաջին էջում ստորակետով են ա-

²⁰ Տե՛ս **Walter W. Greg**, *The Shakespeare First Folio: Its Bibliographical and Textual History*, Oxford, 1955, էջ 331–332:

վարտվում նաև այլ տողեր (Long liue the King, [3] և Tis now strooke twelfe, get thee to bed Francisco, [7]), որոնք Q1-ում առհասարակ չկան: Եվ եթե մնացած դեպքերում Q2-ի գրաշարը հետևել է Q1-ին, ապա զարմանալի է, որ I.1.6-ում, սխալ ստորակետը կրկնելով հանդերձ, նա watch-ը («պահակություն») փոխարինել է ավելի տեղին heure («ժամ») բառով:

Որոշ բանասերներ, ապացուցելու համար, որ 1604/5-ի «լավ» հրատարակության գրաշար X-ն օգտվել է Q1-ից, ցույց են տվել նաև այլ նմանություններ (օրինակ՝ ուղղագրական)²¹: Եվ դրանք առկա են համարյա ողջ առաջին գործողության մեջ: Գրեզի ենթադրությունը հիմնավորվել է նոր փաստարկներով, որոնք հանգեցրել են այն պնդման, թե Q2-ի առաջին գործողությունը շարվել է բացառապես հեղինակային ձեռագրի հիման վրա ուղղված Q1-ի մի օրինակից²²: Այս տեսակետը, նախ, համոզիչ չէ զուտ տեխնիկական առումով, քանզի «վատ կվարտոյի» տողերի արանքներում ու լուսանցքներում չկա այնքան տեղ, որ հնարավոր լիներ արտացոլել Q2-ի բոլոր տարբերությունները Q1-ից: Երկրորդ, եթե անգամ գրաշար X-ն առաջին գործողության համար ձեռքի տակ ունեցել է նաև Q1-ի մի օրինակ, ապա նա այն ակնհայտորեն օգտագործել է ոչ հետևողականորեն, այլ ժամանակ առ ժամանակ, երևի ձեռագրի դժվարընթեռնելի հատվածների լոկ մի մասը դրա օգնությամբ վերծանելու համար: Այլապես, ասենք, նրա շարվածքի մեջ չէին լինի սխալներ, որոնք, Q1-ից շարունակ և ուշադիր օգտվելու դեպքում, հեշտությամբ կուղղվեին: Օրինակ՝ «Տարփանքն էլ, լույս հրեշտակի կողքին անգամ, / Յագենում է երանելի իր անկողնուց» (I.5.55-56) նշանավոր տողերը Q1-ում (1.41-42) այսպես են. So Lust, though to a radiant angle linckt, / Would fate it selfe from a celestiall bedde, իսկ Q2-ում՝ So but though to a radiant Angle linckt, / Will sorte it selfe in a celestiall bed: Այսինքն՝ Q1-ում միայն մեկ էական սխալ կա՝ sate-ի («հագենալ») փոխարեն fate, որը տվյալ համատեքստում անհիմաստ է (շփոթվել են հին տառատեսակում իրար շատ նման s ու f տառերը), մինչդեռ Q2-ում Lust-ի («կիրք») փոխարեն but և sate-ի փոխարեն sorte բառերը երկտողն իսպառ զրկել են բովանդակությունից: Նշանակում է՝ գրաշար X-ն այստեղ օգտվել է միայն ձեռագրից ու չի կարողացել այն ճիշտ հասկանալ:

Թեև Q2-ը «Համլետի» ամենածավալուն բնագիրն է, նրանից բացակայում է F-ի մոտ 70 տող՝ երեք մեծ հատված (II.2.239-270, 334-356, V.2.68-80), առանձին տողեր (երկու դեպքում՝ մի քանի տող. IV.5.162-164, V.1.32-35) և արտահայտություններ ու բառեր: Վերը տեսանք, որ կարճ բացթողումների մի մասը գրաշարների անուշադրության հետևանք են: Ինչ վերաբերում է երեք խոշոր հատվածներին, ապա դրանք հավանաբար ոչ թե հետագա հավելումներ են, այլ եղել են «սևագիր թղթերում», քանի որ դրանց բացակայության պատճառով բնագիրը թերի է դարձել: Առաջին երկուսը՝ «բանտ» Դանիայի և «թատրոնների պատերազմի» մասին, ըստ երևույթին Q2-ից կրճատվել են «դիվանագիտական» նկատառումներով:

²¹ Տե՛ս օրինակ, *Hamlet*, ed. Harold Jenkins, էջ 46–52, *Hamlet*, ed. George R. Hibbard, էջ 99–103:

²² Տե՛ս Alice Walker, The textual problem of *Hamlet*: a reconsideration, *Review of English Studies*, n.s. 2 (1951), էջ 328-330 և նույնի՝ *Textual Problems of the First Folio*: Richard III, King Lear, Troilus and Cressida, 2 Henry IV, Hamlet, Othello, Cambridge, 1953, էջ 121:

1603 թ. Անգլիայի գահ բարձրացած Հակոբ (Ջեյմս) I-ի կինը՝ Էնն թագուհին, Դանիայի արքայադուստր էր, և նրան թերևս հաճելի չէին լինի իր «բանտ» հայրենիքի վերաբերյալ Համլետի դատողությունները: «Թատրոնների պատերազմի» հատվածը նույնպես կարող է հանված լինել Էնն Դանիացուն չվիրավորելու համար²³: «Բանտի» դրվագի հանվելու արդյունքում անհարթություն է առաջացել. Then is Doomes day neere, but your newes is not true; But in the beaten way of friendship, what make you at Elsonoure? («Ուրեմն Դատաստանի օրը մոտ է, սակայն ձեր լուրը ճիշտ չէ. բայց գնանք ընկերության տրորված ուղիով. ի՞նչ եք անում Էլսինորում»): «Բանտի» հատվածը հանվել է true («ճիշտ») բառից հետո, և դրա հետևանքով ունենք but («բայց») բառի անհաջող կրկնություն, կետ-ստորակետից հետո անտեղի B մեծատառ ու առհասարակ կիսատության տպավորություն թողնող խոսք: Նմանօրինակ պատկեր է ստացվել երրորդ նշանակալի բացթողման պատճառով²⁴: Q2-ից դուրս մնացած տողերը շատ կարևոր են, որովհետև վկայում են Համլետի մտածելակերպում կատարված փոփոխության (թվում է՝ նա վճռական է դարձել ու պատրաստ է Կլավդիուսին պատժել) ու Հորացիոյի՝ նրա նկատմամբ անմիանշանակ վերաբերմունքի մասին: Բացի այդ, երբ Համլետը զղջում է Օֆելիայի թաղման ժամանակ Լաերտի հանդեպ իր վարմունքի համար, դրանով նախապատրաստվում է սրամարտից առաջ նրանց «հաշտությունը»: Առանց այս լրացումների երկը տուժում է, և դա նկատելի է հատկապես Համլետի խոսքում.

Քեզ չի՞ թվում, թե պարտք ունենմ. նա՛, որ սպանեց
 Իմ արքային և իմ մորը պոռնիկ դարձրեց,
 Իմ հույսերի ու ընտրության միջև ցցվեց,
 Կարճ զցեց, որ կյանքս որսա, և այդպիսի՛
 Խարդախությամբ... Մի՞թե խիղճը չի պարտադրում՝
 Այս բազուկով նրան պատժել, և անե՞ծք չե՞՞,
 Եթե թույլ տանք, որ մարդկության այդ քաղցկեղը
 Շարունակի չարիք գործել:

«Մի՞թե խիղճը չի պարտադրում»-ին հաջորդող տողերը բացակայում են, և Q2-ում այդ պահին արդեն գալիս է Օզրիկը («մի Պալատական»): Անհասկանալի է մնում՝ ինչն է խղճի թելադրանքը (թեև, օրինակ, Հիբբարդը, մեր կարծիքով՝ անիրավացիորեն, դա համարում է «Քեզ չի՞ թվում, թե պարտք ունենմ» առաջին նախադասության տրամաբանական ավարտ, իսկ բացակայող տողերը՝ հետագա հավելում F-ում)²⁵: Դժվար է կռահել կրճատման պատճառը, և չի առաջարկվել ավելի լավ բացատրություն, քան որ սա պատահական բացթողում է²⁶:

²³ 1604 թ. «Մատուռի մանուկներ» թատերախումբը (որը հանված հատվածում կոչվում է «բազեի մանր ճտեր» ու բնութագրվում նաև այլ քանահրական խոսքերով) անցել էր Հակոբ I-ի կնոջ՝ Էնն թագուհու (1574–1619) հովանավորության տակ և արդեն կոչվում էր «Նորին մեծության մատուռի մանուկներ» (Children of Her Majesty's Chapel): Հետևաբար հատվածը կարող էր թագուհուն վիրավորել:

²⁴ Հմմտ.՝ *Hamlet*, ed. Harold Jenkins, էջ 44–45:

²⁵ Նա հետագա հավելումներ է համարում նաև «բանտ Դանիայի» ու «թատրոնների պատերազմի» հատվածները. *Hamlet*, ed. George R. Hibbard, էջ 110–112, 339:

²⁶ Տե՛ս *Hamlet*, ed. Harold Jenkins, էջ 44, 398:

Q2-ն, այսպիսով, որքան էլ որ բացառիկ բնագիր է՝ ամենայն հավանականությամբ հիմնված հեղինակային ձեռագրի վրա, աչքի է ընկնում տարատեսակ թերություններով: Եվ մասնագետները հազիվ թե կարողանային այն կարգի բերել, եթե Q2-ից մոտ տասնինը տարի անց չհրատարակվեր Շեքսպիրի պիեսների F ժողովածուն՝ «Համլետի» մի ուրիշ, իր հերթին սխալաշատ ու Q2-ի միջոցով ճշտվող տարբերակով հանդերձ: Իսկ մինչ այդ Նիքոլաս Լինգը, որին պատկանում էր երկի հրատարակության իրավունքը, 1607 թ. այն փոխանցել է մեկ այլ հրատարակչի՝ Ջոն Սմեթուիքին: Վերջինս 1611, մոտ 1621 և 1637 թթ. վերահրատարակել է Q2-ը. այդ երեք հրատարակությունները հայտնի են որպես Q3, Q4 ու Q5: Դրանք Q2-ի կրկնությունն են՝ որոշ աննշան տարբերություններով, և չունեն սկզբնագրային արժեք:

АРАМ ТОПЧЯН – *Издание quarto 2 “Гамлета”*. – Из трех оригинальных печатных версий “Гамлета” первая (1603), известная как Кварто 1 (Quarto 1, сокращенно Q1), считается “плохим” (очень кратким и искаженным) изданием, а две последующие, Кварто 2 (1604/5) и Фолио 1 (1623), Q2 и F (или F1), соответственно, “хорошими”. Трагедия обычно издается на основе Q2 и F: либо составляется сводный текст, либо же отдается предпочтение одному варианту, который уточняется при помощи другого. Рассматриваемый в статье вариант Q2 был, по-видимому, набран с неразборчивой рукописи, о чем свидетельствуют разнообразные ошибки, нашедшие место в книге. И если бы вариант F не был включен в известное собрание шекспировских пьес, вышедшее через семь с половиной лет после смерти автора (Folio/F/F1 называется также весь сборник), мы имели бы лишь недоброкачественный “хороший” текст “Гамлета”. Версии Q2 и F (последняя также не лишена ошибок) дополняют и уточняют друг друга, и трудно представить существование одной без другой. В статье рассматриваются текстологические вопросы, связанные с Q2.

ARAM TOPCHYAN – *The Quarto 2 Edition of “Hamlet”*. – The first of the three original printed versions of “Hamlet” (1603), known as Quarto 1 (Q1), is considered to be a “bad” (significantly abridged and corrupt) edition while the following two, Quarto 2 (1604/5) and Folio 1 (1623) – Q2 and F (or F1) respectively – are regarded as “good” texts. The tragedy is usually edited on the basis of Q2 or F: either a conflated text is prepared or preference is given to one of them corrected with the help of the other. The Q2 version discussed in this article was probably set from Shakespeare’s autograph manuscript, presumably quite difficult to read, which is witnessed by various errors found in the book. And if the F version were not included in the famous collection of plays printed seven and a half years after the author’s death (the whole collection, too, is known as Folio/F/F1), we would have only a quite inaccurate “good” text of *Hamlet*. Q2 and F (the latter in its turn not being free of many errors) supplement and correct each other, and it is difficult to imagine the existence of one without the other. The present article discusses these and other textual issues connected with Q2.